ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հոկտեմբերի 2023թ. թիվ 521-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի տեղակալ Հ.Հալիվորյանի զեկուցագիրը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 28.09.2023թ. թիվ 1657-Ն որոշման համաձայն ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված գումարներից Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակիչների սոցիալական խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու ընթացքում առաջացած ծախսերը փոխհատուցելու համար, որպես դրամական աջակցություն, ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական Կարեն Ավետիսյանին հատկացնել 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հնգօրյա ժամկետում հատկացնել գումարը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

06/10/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 6
ք.Վանաձոր